



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ 80-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ Թեմիս Բարեշան Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի եւ Նախաձեռնութեամբ Արեւմտեան Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմնի եւ ծնողական յանձնախումբին Շաբաթ, 30 Հոկտեմբեր 2010ին, Էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ «Աւետիսեան» սրահէն ներս տեղի ունեցաւ Կիրակնօրեայ դպրոցներու 80-ամեայ ճաշկերոյթ- տօնակատարութիւնը:

Հանդիսութեան ներկայ էին՝ Գերայ. Ս. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, Հոգ. Ս. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, քահանայ հայրեր, Ազգային Վարչութեան ներկայացուցիչներ, երեսփոխաններ, հոգաբարձութեան կազմեր, Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչական կազմեր, ծնողներ եւ բարեկամներ: Տերունական «Հայր Մեր» հաւաքական աղօթքէն եւ կիրակնօրեայ դպրոցներու մաղթերգի երգեցողութիւնէն ետք, բացման եւ բարի գալուստի խօսքը փոխանցեց Հոգ. Ս. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

Հայր Սուրբը Նախ իր գոհունակութիւնը յայտնեց կազմակերպուած ձեռնարկին համար եւ իր ոգեշնչող խօսքին ընդմէջէն ըսաւ, որ հայ եկեղեցւոյ անդաստանէն եւ ծառայութեան դաշտէն ներս, Կիրակնօրեայ դպրոցները կը գործեն հայ մանկան եւ պատանիին հոգին ազնուացնելու, հայեցի առողջ նկարագիր կերտելու ու Յիսուսի առաջնորդելու: Եկեղեցին Զրիստոս հիմնած է, եւ մեր պատմութեան բոլոր ժամանակներուն եկեղեցին որպէս մայր, քրիստոնէական արժեքներով դաստիարած է իր զաւակները իսկ Կիրակնօրեայ դպրոցները հոգեւոր այդ դաստիարակութիւնը կազմակերպ եւ ուսումնական ծրագրով կը փոխանցեն եւ ուր Ս. Հոգին մնայուն կը գործէ եւ մեր զաւակները կը մեծնան Աստուծոյ փառքով: Յիսուս ինք էր որ առաջին անգամ մանուկները իր մօտ կանչեց, օրհնեց եւ թելադրեց ժողովուրդին, որ մանուկներու պէս ըլլան երկինքի արքայութիւնը ժառանգելու համար: Սիրելի ծնողներ, ըսաւ Հայր Սուրբը, ձեր զաւակները Կիրակնօրեայ դպրոց ուղարկեցէք որպէսզի Աստուծոյ շունչով մեծնան եւ հեռու ման եկեղեցւոյ շուրջ լարուած ընտանի եւ օտար թակարդներէ: Ապա Հայր Սուրբը անդրադարձաւ Կիրակնօրեայ դպրոցներու աշխատանքներուն եւ առաքելութեան, շեշտելով անոնց մատուցած երախտարժան գործը՝ նուիրուած մեր մատղաշ սերունդին հոգեւոր կրթութեան եւ կրօնական դաստիարակութեան:

Ուշագրաւ էր լուսապատճենի մը ցուցադրումը, որ կարտացոլացներ Կիրակնօրեայ դպրոցներու հակիրճ պատմականը, տարուած աշխատանքներու եւ գործունեութեանց նկարագրումով:

Կիրակնօրեայ դպրոցներու հիմնադրութեան ութսուներորդ տարեդարձին առիթով, Կիրակնօրեայ վարժարաններու Վարիչ Մարմինը գեղեցիկ գաղափար յղացած էր նախորդ տարիներու շրջանաւարտները պատուելու: Շուրջ երեսուն շրջանաւարտ, որոնք թեմիս զանազան կիրակնօրեայ դպրոցներէ շրջանաւարտ, բարձրացան բեմ խորհրդաւոր մոմավառութեամբ: Ապա բեմ հրաւիրուեցան կիրակնօրեայ դպրոցներու տեսուչ-տեսչուհիները, որպէսզի իրենց ծառայութեան պատիւին եւ գնահատականներուն արժանանան:

Ներկաներուն պահուած մեծ անակնկալին հաղորդակից դարձնելու նպատակով, հաղորդավարը Ռոզաննա Ուլիկեան, հրաւիրեց կիրակնօրեայ դպրոցներու Վարիչ Մարմնի ատենապետ Տիար Յակոբ Ջաղացպանեանը: Տիար Յ. Ջաղացպանեան դիտել տուաւ, որ կիրակնօրեայ դպրոցները պարզ դպրոցներ չեն, անոնց արմատները կ'երթան մինչեւ առաքելական դար, իրենց մղումը եւ ուժը ստացած են առաքելներու եւ մեր հայրապետներու «Լոյս հաւատքէն», քրիստոնեայ մեր մշակոյթէն, մեր հոգեւոր ձգտումներէն եւ իրենք զիրենց կ'արդարացնեն անցեալէն մեզի փոխանցուած «հաւատքի ժառանգութիւնը» եւ հոգեւոր հարստութիւնները փոխանցելով մեր նոր սերունդներուն: Ահա թէ որքան նուիրական ու սուրբ է դաստիարակի, մանաւանդ քրիստոնեական դաստիարակութեան գործին լծուած ուսուցչին առաքելութիւնը: Ապա ուրախութեամբ բեմ հրաւիրեց յիսուն եւ անելի տարիներ կիրակնօրեայ դպրոցներէ ներս ծառայող ուսուցչուհիներէն՝ Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանի վաստակաւոր ուսուցչուհի Մարի Խաչերեանը, միաժամանակ Նուարթ Մատինեանը՝ ներայացնելու համար Մ. Խաչերեանի կենսագրականը, անոր նուիրեալ աշխատանքը ու գործունեութեան անցած ուղին:

Ապա հրաւիրուեցաւ Կիրակնօրեայ դպրոցներու Վարիչ Մարմնի փոխ-ատենապետուհի Տիկ. Սեդա Թէչեճեանը: Ան իր կարգին, ուրախութեամբ բեմ հրաւիրեց Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանի վաստակաւոր ուսուցչուհիներէն Տիկ. Ովսաննա Մարգարեանը, եւ ներկայացուց անոր նուիրեալ գործունեութեան եւ որպէս դաստիարակի յիսուն տարիներու հոգեւոր ծառայութեան վաստակը:

Վաստակաշատ ուսուցչուհիներ՝ Մարի Խաչերեան եւ Ովսաննա Մարգարեան, ձեռամբ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանի շնորհուեցան բիրեղապակեայ »Գնահատագիր« յուշանուէրներ:

Ապա բեմ հրաւիրուեցաւ կիրակնօրեայ դպրոցներու առաքելութեան հաւատացող, Էնսիսօ եւ Շըրմըն Օքսի քաղաքապետարանի խորհրդական՝ Կրէկ Մարթայեանը: Պրն. Կրէկ իր գնահատնքի խօսքին մէջ շեշտեց հայ եկեղեցւոյ կարեւորութեան ու անոր դերակատարութեանը, մատնանշելով թէ ինչպէս առողջ սերունդին դաստիարակութիւնը կը նպաստէ համայնքի բարենպաստ զարգացման ու բարգաւաճման, ինչպէս նաեւ անդրադարձաւ այդ նպատակին ծառայող կիրակնօրեայ վարժարաններու դերին ու առաքելութեան: Ապա »Գնահատագիր« ներ յանձնեց Գերայ. Տ. Միւռն Ծ.

Վրդ. Ազնիկեանին եւ Վարիչ Մարմնի ատենապետ Տիար Յակոբ Ջաղացպանեանին:

80-ամեակի հանդիսութեան պաշտօնական արարողութեան փակման ու օրհնութեան խօսքին մէջ, Հայր Միւռն, նախ իր գոհունակութիւնը յայտնեց կազմակերպուած ձեռնարկին համար եւ իր ոգեշնչող խօսքին ընդմէջէն առաւելաբար ծանրացաւ կիրակնօրեայ վարժարաններու կտրած 80 տարիներու հոգեւոր ճանապարհորդութեան եւ բեղուն գործունեութեան: Ան ներածականով մը ներկայացնելէ ետք կիրակնօրեայ վարժարաններու 80ամեայ հակիրճ պատմականը, Սահակ Կաթողիկոսի ութսուն տարիներ առաջ ըրած հայրական կոչին արձագանգն է, ըսաւ այս օրուան հանդիսութիւնը: Ապա Հայր Սուրբը մատնանշեց ու վեր առաւ կիրակնօրեայ վարժարաններէ ներս տարուող կրթական, ուսումնական ինչպէս նաեւ աշակերտական աշխատանքները, գործունեութիւններն ու ապագայ ծրագիրները: Որպէս հաւատքի դարբնոց եւ հայակերտման միջնաբերդ, իր առաքելութեամբ, ծառայութեամբ եւ կրթական ուսումնական յատուկ ծրագրով, կիրակնօրեայ դպրոցները կոչուած են քրիստոնէական արժէքներով դաստիարակել հայ մանուկն ու պատանին եւ անոնց մէջ կազմաւորել տիպար հայը: Կիրակնօրեայ դպրոցներու վաստակը եւ ձեռք ձգած տասնամեակներու ծառայութիւնը նոր սերունդի զաւակները աստուածահաճոյ ճշմարիտ գիտութեամբ զինելու ճիգերը, այսօր գնահատանքի կ'արժանանան:

Ապա Հայր Սուրբը, ողջունեց կիրակնօրեայ վարժարաններու ծառայութեան լծուած տնօրէններն ու ուսուցիչները, ծնողներն ու բարերարները, օրհնեց եւ գնահատեց կիրակնօրեայ վարժարան յաճախող բոլոր մանուկներն ու պատանիները, թելադրելով յարատեւել կիրակնօրեայ դպրոցի ուսումնական ծրագիրներուն, հեռու մնալ փողոցէ, չար ընկերներէ, սուտէ, կեղծիքէ, չարէ, օտարամոլութենէ. սիրել բարին ու ճշմարիտը: Կոչ ուղղեց, որ այլ ծնողներ միանան կիրակնօրեայ վարժարաններու մեծ ընտանիքին եւ իրենց զաւակները ուղարկեն կիրակնօրեայ դպրոց, կրօնական եւ հայեցի առողջ դաստիարակութիւն ստանալու:

Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան սեղաններու օրհնութենէն ետք, երեկոյթը շարունակուեցաւ գաղութիս սիրուած երգիչ՝ Ժոզէֆ Գրիգորեանի երգերու խանդավառ մթնոլորտին մէջ:

ՌՈՉԱՆՆԱ ՌԻԿԿԵԱՆ

PRELACY SUNDAY SCHOOLS 80TH ANNIVERSARY CELEBRATION

On Saturday, October 30th, 2010, the 80th anniversary of Prelacy Sunday Schools was celebrated at "Avedissian" Hall of Holy Martyrs Church in Encino.

The celebration was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and was organized by the Sunday Schools' Directorate & PTO.

Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, clergy members, Executive Council members, delegates, Boards of Trustees members, Sunday School students, teachers, parents, and hundreds of supporters were in attendance.

The evening began with the Lord's Prayer and the singing of the Sunday School anthem. After which Very Rev. Fr. Barthev Gulumian was invited to deliver the opening remarks.

Fr. Barthev spoke highly of the invaluable role of Sunday Schools in the lives of our children, which is to teach and instill our Christian values and religious heritage, lead our children to our Lord Jesus Christ, and build character. In conclusion, he urged all parents to entrust their children to Sunday Schools.

A slideshow presentation of the history of the Sunday Schools followed.

Next, thirty graduates from Sunday Schools and directors of various parishes were invited on stage where the students participated in a candle-lighting ceremony and the directors were honored for their service.

Master of Ceremonies Ruzanna Ouligian then invited Chair of the Sunday Schools' Directorate Mr. Hagop Tchagaspanian to deliver his remarks. Mr. Tchagaspanian announced that on this occasion, teachers who have served for over fifty years would be recognized and honored for their service. He invited Ms. Marie Khatcherian, Sunday School teacher at St. Garabed Church, and Directorate Vice-Chair Mrs. Seta Kejejian invited Mrs. Ovsanna Markarian, Sunday School teacher at Holy Martyrs Church, both of whom were presented with mementos by Fr. Muron for their dedicated service.

Encino Neighborhood Council member Mr. Greg Martayan also delivered remarks, after which he presented Fr. Muron and Mr. Tchagaspanian with mementos of appreciation.

The official program concluded with remarks by Fr. Muron.

Fr. Muron expressed his thanks and appreciation to the members of the organizing committee and to the guests in attendance for their encouragement and support. He reflected on the 80 history of the Sunday Schools, which were established by H.H. Catholicos Sahag of blessed memory. Fr. Muron also spoke of the Sunday School curriculum, activities, and future programs. He saluted the directors and teachers and commended them for their commitment to the education and instruction of our youth, and blessed and commended the students.

Following the blessing of tables by Fr. Barthev, the evening continued with entertainment by singer Joseph Krikorian.